

ՀՀ փոխվարչապետի կողմից ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքում անցկացրած խորհրդակցությանը մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետը

04.02.2014



ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքը տեղեկացնում է, որ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը փետրվարի 3-ին Սյունիքի մարզ կատարած աշխատանքային այցն սկսել է Սիսիանի տարածաշրջանից:

Գորայք համայնքում փոխվարչապետը խորհրդակցություն է անցկացրել Սյունիքի և Վայոց ձորի մարզպետներ Վահե Հակոբյանի ու Էդգար Ղազարյանի, Ջերմուկի և Գորայք համայնքների ղեկավարների, ինչպես նաև «Գեոթիմ» ընկերության պատասխանատուների մասնակցությամբ: Ներկայացվել են ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության փաթեթի շրջանակում Գորայք, Ջերմուկ, Գնդեվազ և Սարավան համայնքներում իրականացվելիք ծրագրերը: